

# STAFF ANALYSIS

Vol. 5 No. 8 | March 2016

## Ինտեգրացիոն գործընթացները հայաստանյան քաղաքական կուսակցությունների օրակարգում *Հայկակ Արշամյան*

Հայաստանում արդեն իսկ գործող և նորաստեղծ քաղաքական ուժերի օրակարգերը մեծ մասամբ ձևավորվում են ոչ թե գաղափարական հենքի վրա՝ դասական իմաստով, այլ պայմանավորվում են տվյալ պահին գոյություն ունեցող ներքաղաքական, տարածաշրջանային և աշխարհաքաղաքական զարգացումներով: Այլ կերպ ասած, քաղաքական ուժերը ոչ միայն շարժվում են իրենց շահերով կամ արտաքին մարտահրավերներից բխող իրենց տեսլականով, այլև՝ գերակայում է քաղաքական ու կուսակցական հարմարվողականությունը (կոմֆորմիզմ): Հայաստանի պարագայում, նույնիսկ ազատական գաղափարախոսական հենքեր ունեցող կուսակցությունները կարող են կտրուկ փոխել իրենց դիրքորոշումները տարաբնույթ ներքին ու արտաքին զարգացումների ընթացքում: Նման միտումները հատկապես սրվում են, երբ երկրի արտաքին մարտահրավերները կապվում են այս կամ այն աշխարհաքաղաքական ուժերի կողմից եկող ճնշումներով ու ազդակներով, ինչպես օրինակ դա տեղի ունեցավ 2013թ.-ին՝ եվրահինտեգրման գործընթացների սրընթաց զարգացումների սցենարի պարագայում. 2013թ. սեպտեմբերի 3-ին ՀՀ արտաքին քաղաքական կուրսի շրջադարձը և դրան հաջորդած զարգացումները: Հատկապես խոսքը 2014թ. դեկտեմբերի 4-ի «Եվրասիական տնտեսական միության» պայմանագրին միանալու հարցում խորհրդարանական քաղաքական ուժերի դիրքորոշումն էր, որն արտացոլվեց Ազգային ժողովում, երբ Եվրասիական տնտեսական միությանը (ԵԱՏՄ) Հայաստանի միանալուն դեմ

քվեարկեցին միայն «Ժառանգություն» խմբակցությունը, ՀԱԿ խմբակցության անդամ Նիկոլ Փաշինյանը և անկախ պատգամավոր Էդմոն Մարությանը (103 կողմ, 7 դեմ և 1 ձեռնպահ հարաբերակցությամբ):

Պետք է նշել, որ «Ժառանգություն» խմբակցության մի մասը ներկայացնում են «Ազատ դեմոկրատներ» կուսակցության անդամները, որոնք միշտ էլ բաց հայտարարում են, որ կողմնակից են Հայաստանի՝ եվրատինտեգրման քաղաքականությանը:

Մյուս կողմից, հայաստանյան մի շարք կուսակցություններ արդեն մի քանի տարի է՝ տարբեր ձևաչափերով գործընկերային հարաբերություններ են հաստատել եվրոպական քաղաքական ուժերի հետ: Երեք կուսակցություններ՝ Հայաստանի հանրապետական կուսակցությունը (ՀՀԿ), «Ժառանգությունը» և «Օրինաց երկիրը» (ՕԵԿ) դեռևս 2012-ին դարձել են «Եվրոպական ժողովրդական կուսակցության» (ԵԺԿ) դիտորդանդամ: Հիշյալ երեք կուսակցությունների ներկայացուցիչները ստորագրել են համատեղ հռչակագիր, որում հաստատել են իրենց պատրաստակամությունը՝ հավատարիմ մնալու եվրոպական ժողովրդավարական արժեքներին Հայաստանի քաղաքական, տնտեսական և իրավական համակարգերի բարեփոխման և զարգացման ընթացքում: Սակայն, փաստացի, ՕԵԿ-ն ու ՀՀԿ-ն 2013-ի սեպտեմբերից հեռացել են եվրահինտեգրման գործընթացների ուղուց և որդեգրել լիովին այլ քաղաքական կուրս, այն է՝

ԵԱՏՄ անդամակցություն, որը հիմնականում արտահայտվում է միայն Ռուսաստանի հետ տնտեսական ու քաղաքական մերձեցմամբ:

Մյուս քաղաքական ուժը, որը սերտ կապեր ունի եվրոպական քաղաքական շարժումների ու կառույցների հետ, Հայ ազգայի կոնգրեսն է (ՀԱԿ): ՀՀԾ-ն դեռևս 2010-ին դարձել է «Եվրոպայի լիբերալ դեմոկրատների ու բարեփոխումների» կուսակցության լիիրավ անդամ: Վերջինս 2012-ին վերանվանվեց «Լիբերալները և դեմոկրատները Եվրոպայի համար» Այսինքն: Իսկ ՀԱԿ կուսակցության ստեղծումից հետո այն դարձավ հիշյալ Այսինքն լիիրավ անդամ: Թե՛ նախկին ՀՀԾ-ն և թե՛ այժմյան ՀԱԿ կուսակցությունը պնդում են, որ իրենք ազատական արժեքների կրող են, և Հայաստանի՝ ԵԱՏՄ-ին միանալու իրենց ջատագովությունը կուսակցությունը հիմնավորեց անվտանգության նկատառումներով: Չնայած դրան, ՀԱԿ առաջնորդ Լևոն Տեր-Պետրոսյանը եվրաինտեգրման գործընթացների կողմնակից ու ԵԱՏՄ-ը Հայաստանի միանալուն դեմ արտահայտվող քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին անվանեց ջղաձգվող մարզիկներ, ինչով փաստացի ցույց տվեց, որ ՀԱԿ-ի միակ պատճառաբանությունը անվտանգության խնդիրները չէին: Մինևույն ժամանակ, պետք է ընդունել, որ ՀԱԿ-ը շարունակում է սերտ համագործակցել եվրոպական կառույցների ու քաղաքական ուժերի հետ, հատկապես՝ Հայաստանի ժողովրդավարական բարեփոխումների, մարդու իրավունքների և ընտրական գործընթացների առումով:

Եվրոպայի սոցիալիստների կուսակցության մեջ Հայաստանի կուսակցություններից ոչ մեկը անդամակցություն չունի, չնայած, որ Հայ հեղափոխական դաշնակցությունը (ՀՅԴ) Մոցինտերնի անդամ է, բայց Մոցինտերնի կուսակցության հետ կապված վերապահումներ ունի: Վերջինս համարվում է «պրոթորքական» կուսակցություն, քանի որ կողմ է Թուրքիայի՝ եվրաինտեգրման գործընթացին:

Ըստ էության, Հայաստանի քաղաքական դաշտի հին խաղացողները, բացի «Ժառանգություն»-ից, որը ազգային-ազատական կուսակցություն է, և «Ազատ դեմոկրատներ»-ից, զոնե եվրաինտեգրման հարցերում կամ բացահայտ հրաժարվել են այդ ուղուց և կողմնակից են ԵԱՏՄ-ի հետ ինտեգրման քաղաքականությանը,

կամ ժամանակավորապես կասեցրել են այդ ուղղությամբ քայլերը:

Այս համատեքստում կարելի է դիտարկել նաև Հայաստանի ներքաղաքական զարգացումները գալիք խորհրդարանական ընտրություններին ընդառաջ: Չնայած այն փաստին, որ Հայաստանում մոտակա համապետական ընտրությունները տեղի են ունենալու 2017թ-ին, սակայն կարելի է փաստել, որ նախընտրական պայքարն արդեն վաղուց սկսվել է: Վերադասավորումների սկիզբը դրվեց 2015թ. փետրվարին, երբ Սերժ Սարգսյանը և նրա ղեկավարած ՀՀԿ-ն հասան քաղաքական դաշտի նոր ավերածության: Թուլացվեց վերջին մի քանի տարում աստիճանաբար ձևավորված ընդդիմադիր միասնական պլատֆորմը՝ ի դեմս «Բարգավաճ Հայաստան» կուսակցության (ԲՀԿ), ՀԱԿ-ի և «Ժառանգության», որոնք հանդես էին գալիս 100%-ոց խորհրդարանական կառավարման դեմ: Այդ պլատֆորմի հիմնական ֆինանսական հենարանը, հանձինս ԲՀԿ-ի և Գ.Ծառուկյանի, գնալով մարզինալացվեցին թե՛ արտաքին հարվածների և թե՛ կուսակցության անդամների ու համակիրների հիասթափության հետևանքով: Հաջորդ քայլը սահմանադրական փոփոխություններն էին՝ նախորդ տարվա դեկտեմբերի 7-ի կասկածելի արդյունքներով հանրաքվեի միջոցով, որտեղ ՀՀԿ-ն միասնական հանդես եկավ ՀՅԴ-ի հետ, ինչի արդյունքում էլ ս.թ. փետրվարի 24-ին ՀՀԿ և ՀՅԴ կուսակցության միջև կնքվեց «Քաղաքական համագործակցության համաձայնագիրը», որով ՀՅԴ-ն կառավարությունում ստանձնեց մի շարք քաղաքական պաշտոններ: Սա քաղաքական դաշտի մոնոպոլացման հաջորդ քայլն էր, ինչը միտում ունի, ձևականորեն պահպանելով քաղաքական ընդդիմախոսների կուսակցական ինստիտուտները, ընտրական օրենսգրքում իշխող քաղաքական փոփոխություններով գալիք խորհրդարանական ընտրություններում, առանց լուրջ խոչընդոտների, վերցնել մանդատների մեծամասնությունը, և իշխանության դեկր պահել ՀՀԿ-ի ձեռքում առնվազն մինչև դրան հաջորդող խորհրդարանական ընտրություններ:

Փաստորեն, քաղաքական դաշտում տեղի ունեցան և դեռ շարունակվում են հին քաղաքական ուժերի վերադասավորումները: ՀՀԿ-ն, ի դեմս Սերժ Սարգսյանի, ինտենսիվորեն խառնում է բոլոր խաղաքարտերը, դրանք գալիք ընտրություններից առաջ վերջնականապես հստակեցնելու մտադրությամբ: Մինևույն

Ժամանակ, վերջին ժամանակներս ստեղծված նոր քաղաքական ուժեր մտան խաղի մեջ, որոնք փորձելու են իրենց տեղերը ստանալ ապագա խորհրդարանում:

Իսկ ի՞նչ անելիքներ կարող են ունենալ եվրոպական արժեքներն իրենց գաղափարախոսական կամ քաղաքական օրակարգում (իրականում թե՛ ձևական) արտահայտող հին քաղաքական ուժերը խորհրդարանական ընտրություններին ընդառաջ: ՀՀԿ-ի պարագայում դա կարող է լինել իշխանությունների կողմից ներկայացրած ընտրական օրենսգրքի փոփոխությունների հարցում ընդդիմությանն ու քաղաքացիական հասարակության պահանջներին ընդառաջ գնալը և ազատ ու թափանցիկ ընտրությունների անցկացումը: Միայն այս պարագայում ՀՀԿ-ն կարող է ինչ-որ կերպ փրկել իր օրեցօր անկում ապրող վարկանիշը, եթե իհարկե նման ցանկություն ու ձգտում կա այդ կուսակցության ներսում: Սակայն, կարծում ենք, սա անհավանական սցենար է ՀՀԿ պարագայում, որն ընդհանուր շահերով միմյանց կապված պետական չինովնիկների ու տնտեսությունը մոնոպոլացրած օլիգարխների խմբավորում է: Այն մասներում է Արևմուտքի առջև՝ տարաբնույթ վարկեր ու դրամաշնորհներ բերելու նպատակով, սակայն հայտնի պատճառներով կախված է ռուսական կառավարող շրջանակներից: Ուստի, քանի դեռ Ռուսաստանը գնում է ԵԱՏՄ ինտեգրացիոն ճանապարհով և լուրջ դերակատարություն ունի Հարավային Կովկասում, ՀՀԿ-ն կմնա ինտեգրացիոն գործընթացների այդ ծիրում:

ՀՀԿ-ի պարագայում դա ՀՀ ընտրական օրենսգրքի փոփոխությունների հարցում հետևողական աշխատանքն է, ինչն այս կուսակցությունը իրականացնում է, և այս մեկ տարվա ընթացքում հասարակությանը համոզելն է, որ բացի իրենցից, այլ արևմտյան արժեքներ կրող ու միաժամանակ Արևմուտքի ու Ռուսաստանի միջև հավասարակշռված քաղաքականություն վարելու ունակ քաղաքական ուժ չկա:

ՀՅԴ պարագայում այս կուսակցությունը միշտ էլ վարել է ռուսամետ քաղաքականությունն ազգայնական գունավորմամբ և հույս ունի գալիք ընտրություններին մասնակցել ՀՀԿ-ի հետ դաշինքով, ինչն էլ այս կուսակցության համար որոշակի տեղեր կապահովի ապագա պառլամենտում:

Նոր քաղաքական ուժերի ստեղծումը միշտ չէ, որ դրական ընկալում է ունեցել Հայաստանի քաղաքական կյանքում: Հաճախ այն դիտվել է արհեստական երևույթ, ասոցացվել է մեկ մարդու վրա հիմնված և իրականում չգործող կառույցի հետ, որը չի ունեցել հստակ ռազմավարություն, ավելին՝ ունակ չի էլ եղել ընտրազանգված հավաքագրել ու պայքարել քաղաքացիների ձայների համար: Բացի այդ, կուսակցությունների նկատմամբ հանրային ընկալման մեծ խնդիր կա Հայաստանում: Հասարակությունը կուսակցություններին չի ընկալում որպես գաղափարական հիմքերի վրա ձևավորված քաղաքական ուժեր, այլ դիտարկում է դրանց՝ որպես զուտ իշխանության գալու կամ իշխանության մնալու գործիք. հասարակական ընկալմամբ կուսակցությունները դիտարկվում են անհատների ու լիդերների մակարդակում, որոնք շարժվում են անձնական ու խմբային շահերով: Ընդ որում, Հայաստանի քաղաքական ուժերի մեծ մասը միմյանցից շատ չեն տարբերվում իրենց գաղափարներով, ավելին՝ չեն առաջարկում այլընտրանքային լուծումներ: Սակայն վերջին զարգացումների լույսի ներքո նոր, թարմ ու երիտասարդ քաղաքական ուժերի ձևավորումն իրոք ողջունելի է: Դրանց շարքում են «Լուսավոր Հայաստանը» և «Քաղաքացիական պայմանագիրը»: Միևնույն ժամանակ, ձևավորվեցին նաև «Նոր Հայաստան» հանրային փրկության ճակատը և «Հայկական վերածնունդ» կուսակցությունը «Օրինաց երկրի» հիմքերի վրա:

Նոր քաղաքական ուժերը ձգտում են իրենց տեղավորել որոշակի գաղափարախոսության շրջանակներում, կամ առնվազն բարձրաձայնում ու հանրայնացնում են իրենց դիրքորոշումը որոշակի քաղաքական, սոցիալական ու տնտեսական հարցերում: Օրինակ, «Լուսավոր Հայաստանը» հստակ խոսում է իր՝ պրոեվրոպական ու ազատական լինելու մասին, իսկ «Հայկական վերածնունդը» միանշանակ է իր պրոռուսական և ԵԱՏՄ-ին հավատարիմ լինելու հարցում: «Լուսավոր Հայաստանը» հաստատում է, որ երկիրը պետք է գնա եվրաինտեգրման ճանապարհով, ավելի խորը կապեր ունենա եվրոպական կառույցների հետ, և Հայաստանի՝ ԵՄ անդամակցության շատագուցվել է: «Հայկական վերածնունդը», որն իրականում վաղուց իր վարկը կորցրած և մարզինալացված ՕԵԿ-ի վերաբրենդավորումն է, պահանջում է, որպեսզի Հայաստանը էլ ավելի խորացնի իր հարաբերությունները ԵԱՏՄ-ում և ՀԱՊԿ-ում:

«Քաղաքացիական պայմանագիրը» որդեգրել է ոչ-ոչի քաղաքականությունը և հայտարարում է, որ այս պահին պետք է խոսել միայն հայաստանակենտրոն քաղաքականությունից: Այս կուսակցությունն իր մեջ ներառել է ոչ միայն փորձված քաղաքական գործիչներ, այլև՝ թարմ երիտասարդ ուժեր, հիմնականում ՀԿ սեկտորից, և փորձում է կուսակցության կառավարումը վարել բացախոսության ու ժողովրդավարական հիմունքներով:

Թե՛ «Քաղաքացիական պայմանագիրը» և թե՛ «Լուսավոր Հայաստանը» տարբեր ձևաչափերով Երևանում և մարզերում կազմակերպում են բաց հանդիպումներ քաղաքացիների հետ, որը նրանց օգնում է ձևավորելու իրենց օրակարգերը գալիք խորհրդարանական ընտրություններից առաջ, ինչպես նաև՝ նոր անդամներ հավաքագրելու նպատակով: Միևնույն ժամանակ, երկուսն էլ իրականացնում են դրամահավաքներ, ու դրանով փորձում են նոր մշակույթ մտցնել կուսակցությունների ֆինանսավորման գործընթացում: Ընդ որում, հիշյալ քաղաքական ուժերն արդեն իսկ սկսել են նախընտրական պայքարը, և այս առումով երկրի քաղաքացիների՝ քաղաքական գործընթացներին ներգրավվածությունը որոշ չափով կբարձրանա, ու նրանց հնարավորություն կտա ոչ միայն դուրս գալ քաղաքական գործընթացներում սովորական դիտորդության շրջանակներից, այլև՝ ուղղակի մասնակից դառնալ ու ներգրավվածություն ունենալ:

Եվրախնտեգրման կողմնակից քաղաքական ուժերը շանսեր կունենան, եթե խորհրդարանական ընտրություններից առաջ ձևավորեն միասնական դաշինք: Իրանց շարքում են «Լուսավոր Հայաստանը», «Ազատ դեմոկրատները», «Ժամանագությունը», գուցե նաև՝ ՀԿ-ը: Այս առումով, նրանք կստանան ոչ միայն ՀՀ քաղաքացիների որոշակի ձայները, այլև քաղաքացիական հասարակության մի հատվածի աջակցությունը, որն էլ նրանց կօգնի ԱԺ-ում ստանալ բավարար ձայներ:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը արդեն իսկ հայտարարել է, որ ընտրությունների է գնալու միայնակ: Միևնույն ժամանակ, սահմանադրական փոփոխություններին նրանց չեզոքությունը, ընտրական օրենսգրքի փոփոխությունների քննարկումներին մասնակից չլինելը խոսում է այն մասին, որ նրանք փորձում են, չխախտելով խաղի ընդհանուր կանոնները, առանց ռուսամետության կամ արևմտամետության

երանգների՝ իրենց տեղերն ապահովել ապագա Ազգային ժողովում:

Միևնույն ժամանակ, ՀՀԿ-ն, չնայած ՀՅԴ հետ ստորագրված համաձայնագրի, խաղի մեջ է մտցրել նորացված ՕԵԿ-ին, որը պահեստային տարբերակի դերակատարություն է ունենալու գալիք ընտրություններում և ՀՅԴ հանդեպ բալանսավորված քաղաքականության գործիքի դեր է ստանձնելու: Այս երկուսի պարագայում ՀՀԿ-ն գործ ունի ռուսամետ ուժերի հետ, որոնք չեն էլ թաքցնում իրենց դիրքորոշումը: Ընդ որում, նմանատիպ դերակատարություն կարող են ստանձնել նաև մարզինալացված «Բարգավաճ Հայաստանը», որին նոր թափ կարող է հաղորդել Գագիկ Ծատուկյանին քաղաքականություն հետ բերելը, ինչպես նաև՝ նախկին արտգործնախարար Վ.Օսկանյանի կողմից ստեղծվող կուսակցությունը:

Ըստ էության, ժամանակն է ավելի հստակ դիրքորոշումների, ստեղծագործ մոտեցումների, բաց և հաշվետու գործելու, հասարակության հանրային բարձր մասնակցության, քաղաքական նորատիպ գործունեության ու կազմակերպվածության: Առավել կարևոր են կուսակցությունների հստակ գաղափարական դիրքորոշումները և ռազմավարության տեսլականները: Մրանք են այն հիմնական գործոնները, որոնք հնարավորություն կտան հին և նոր քաղաքական ուժերին մրցունակ դառնալ և, միևնույն ժամանակ, ապահովել քիչ թե՛ շատ նորմալ ընտրություններ, որոնց արդյունքները կգոհացնեն ոչ միայն քաղաքական դաշտի խաղացողներին ու միջազգային հանրությանը, այլև՝ ՀՀ քաղաքացիներին: Լեզիտիմ իշխանության ձևավորումը վաղուց դարձել է Հայաստանի կարևորագույն հիմնահարցը, որը հնարավորություն կտա հաղթահարել ոչ միայն քաղաքական, տնտեսական ու սոցիալական բազմաթիվ խնդիրներ ու կանխել ներքին ճգնաժամերը, այլև՝ երկիրը կենսունակ դարձնել արտաքին մարտահրավերներին դիմակայելու գործում: